Արձանագրություն N 2

**ԿՄՆԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/05 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

*ի. Նոր Արտամետ* 13 հուլիսի 2021թ. ժ 12:30

*Մասնակցում էին՝*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Արմինե Զաքարյան | Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ավետիկ Սահակյան | Նոր Արտամետ համայնքի ավագանու անդամ |
| | Համլետ Վարդանյան | Նոր Արտամետ համայնքի ավագանու անդամ |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Յուղիկ Առաքելյան | |

**Օրակարգ**
**հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

**1.Հայտերի բացման վայրի, օրվա և ժամվա մասին**

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ԿՄՆԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/05 ծածկագրով գնանշման հարցումով Նոր Արտամետ համայնքի 2-րդ փողոց 1-ին նրբանցքի 3-րդ և 4-րդ բազմաբնակարան շենքերի բակային տարածքի՝ հանգստի գոտու բարեկարգման աշխատանքների գնման հայտերի բացումը տեղի է ունեցել՝ ՀՀ Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 1-ին փ, թիվ 107 հասցեում, 2021թ-ի հուլիսի 13-ին ժամը 10:00-ին:

Վերոնշյալ ծածկագրով գնանշման հարցումով գնման նախահաշվային գինը կազմում է՝ 15742500 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

**2. Տվյալներ հայտեր ներկայացրած մասնակիցների վերաբերյալ**

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի կողմից կազմակերպված ԿՄՆԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/05 ծածկագրով գնանշման հարցումով գնմանը հայտ են ներկայացրել

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն, հեռախոսի համարը, էլեկտրոնային հասցեն |
|---|---|---|
| 1 | «Արտշին-1» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Կարապետյան 9, Հեռ. 094440420, azaqaryan2011@mail.ru |

**3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների հայտերի ծրարները կազմված են և ներկայացված են հրավերների պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Մասնակիցների հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը.

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**.

Մասնակիցների հայտերում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

6. ***Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.***

Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկները.

| Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ |
|---|---|---|
| | Չ/Հ 1 | Չ/Հ 1 |
| «Արտշին-1» ՍՊԸ | 13118342 | 15742010 |

7. **Տվյալներ՝ մասնակցի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելու մասին.**

2021թ-ի հուլիսի 13-ի դրությամբ ԿՄՆԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/05 ծածկագրով ընթացակարգի մասնակիցներից ոչ-որ ներառված չէր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

8. ***Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

9. ***Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.***

ԿՄՆԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/05 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «Արտշին-1» ՍՊԸ-ը, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի, որի հետ սահմանված կարգով առաջարկվում է կնքել համապատասխան պայմանագիր:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Զաքարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ավետիկ Սահակյան

Համլետ Վարդանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ցոլիկ Առաքելյան